ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄՍԳ ԹՀՄ-ԳՀԱՊՁԲ 19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

գ. Սարուխան **«28» «02» 2019թ.**

ժ 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Վ. Կիրակոսյան
Հանձնաժողովի անդամներ Ա. Հակոբյան, Մ. Շահինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից <<Համլետ Զաքոյան>> ԱՁ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայն որի <<Համլետ Զաքոյան>> ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ ունեցել է իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսից ավելի 1315(մեկ հազար երեք հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդված 1-ին մասի 2-րդ ենթակետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի դրույթները.

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ N 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ և 50-րդ չափաբաժիններով՝ մերժել <<Համլետ Զաքոյան>> ԱՁ -ի հայտը:

բ/ քանի որ <<Համլետ Զաքոյան>> ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա պատվիրատուն՝ այդ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

գ/ N 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ և 50-րդ չափաբաժիններով՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով՝

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) տեղեկատվությունը և հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝

N 3-րդ, 6-րդ, 7-րդ և 43-րդ չափաբաժիններով՝ <<Համլետ Զաքոյան>> ԱՁ –ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ անգործության ժամկետ չսահմանելով:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուց հետո ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթացը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, գ. Սարուխան, Մ. Խորենացի 32 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Վ. Կիրակոսյան

Անդամներ՝ _____ Ա. Հակոբյան

_____ Մ. Շահինյան

Քարտուղար _____ Ժ. Խաչատրյան